

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻՆԱ ՀԵՆՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՐՄԻՆԱՍՏԵՂԾ ՄԻՋՈՑ
ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍԵՐՈՒՄ**

Ժ.02.07– «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **բ.գ.թ., դոցենտ Ս.Ա. Մարգարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **բ.գ.դ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյան**
բ.գ.թ., դոցենտ Մ.Մ. Օհանյան

Առաջատար կազմակերպություն՝ **Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. սեպտեմբերի 18-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. օգոստոսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բ.գ.դ., պրոֆեսոր



Ե.Լ. Երզնկյան

Գիտատեխնիկական բազմաշերտ զարգացումները, որոնք 20-րդ դարասկզբից սկսած՝ բուռն վերելք ապրեցին, նպաստեցին միջգիտական կապերի մերձեցմանը, ինչն էլ իր հերթին նպաստեց, որ գիտության և արդյունաբերության որոշակի ոլորտների բառապաշարային միավորները հատեն ոլորտային սահմանները և տեղաշարժվեն այլ բնագավառներ: Արդյունքում, կարևորվեց միջգիտակարգային տերմինահամակարգերի լեզվանյութի համալիր ուսումնասիրությունը և տերմինների ճշգրիտ վերարտադրումը մայրենի լեզվով, ինչպես նաև ստեղծված նոր տերմինների իմաստաբանական և կառուցվածքային վերլուծությունը, թարգմանությունը և մեկնությունը:

Նշված զարգացումների համատեքստում, ինչպես նաև լեզվի հարաճուն փոփոխությունների արդյունքում բազմադարյա ակունքներ ունեցող տերմինահամակարգերը նույնպես սկսել են փոփոխվել և համալրվել նոր միավորներով՝ պայմանավորված գիտության զարգացման միտումներով, առաջանցիկ գիտական լեզվանտաճողությամբ, միջնակույթային հեռահաղորդակցության մասշտաբներով, ժամանակային և տարածական անջրպետների վերացմամբ: Մասնավորապես, բժշկագիտության անգլալեզու տերմինահամակարգը, որի ձևավորումը հարյուրամյակների պատմություն ունի, առ այսօր շարունակում է ակտիվորեն զարգանալ և ընդգրկել այնպիսի միավորներ, որոնք ձևավորվում են փոխաբերական լեզվանտաճողության արդյունքում՝ փոխաբերության հենքով: Ընդ որում՝ նոր կազմավորված տերմինների հիմքում **ընդհանուր գործածական բառամթերքի միավորների բառիմաստների փոփոխությունն է:** Բառիմաստի այսպիսի փոփոխություն առաջանում է միավորի իմաստի փոխաբերացման արդյունքում, ինչի հիմքում ընկած է բառիմաստի արտաքին, ներքին կամ գործառութային առնմանությունը, նմանօրինակությունը կամ կցորդությունը:

Լեզվի ներքին բառակազմական եղանակներով ստեղծված միավորների քննությանը անդրադարձ է կատարվում բժշկագիտական անգլալեզու տերմինների ուսումնասիրությանը նվիրված գրեթե բոլոր աղբյուրներում, սակայն բժշկագիտության բնագավառում կիրառվող փոխաբերական միավորների համակողմանի ուսումնասիրությունը հեռու է բավարար լինելուց: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում ապահովել բժշկության մեջ լայնորեն գործածվող այս միավորների համալիր հետազոտությունը, ինչը կարող է նպաստել ոչ միայն ծառացող թարգմանչական խնդիրների լուծմանը, այլև բառարանագրության արդյունավետ մոտեցումների կիրառմանը:

Բժշկությունը, ի թիվս բազմատարր գործունեության, ենթադրում է բժիշկ-հիվանդ փոխհարաբերություն, մասնագիտական տեղեկատվության և գիտական բացահայտումների մասին տվյալների հաղորդում և տարածում հասարակության լայն շրջանում, ինչպես նաև բուժական, կլինիկական, ախ-

տորոշիչ և գիտահետազոտական գործունեության ծավալում: Նշվածն իրագործելու նպատակով անհրաժեշտ է լավագույնս տիրապետել բժշկագիտական խոսքի հմտություններին, ինչի հիմքում ընկած է մասնագիտական տերմինների լիարժեք յուրացումն ու անսխալ կիրառությունը: Ընդ որում՝ մասնագիտական բառամթերքի իմացությունն ապահովելու ճանապարհին հարկ է նաև անդրադարձ կատարել նոր տերմինների, մասնավորապես՝ լայն գործածություն ստացած փոխաբերական միավորների քննությանը:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է անգլալեզու բժշկագիտական տերմինների ձևավորման և գործառույթային առանձնահատկությունների զարգացման հարացույցում փոխաբերություն երևույթի ոչ բավարար ուսումնասիրությամբ, ինչպես նաև փոխաբերության տերմինաստեղծ հայեցակերպի և բժշկագիտության ասպարեզում փոխաբերական միավորների գործածության վերաբերյալ հետազոտական աշխատանքների սակավությամբ: Պայմանավորված այս գործոններով՝ դժվարություններ են առաջանում մասնագիտական նեղ ուղղվածությամբ բժշկական այն տեքստերի մեկնության կամ թարգմանության ժամանակ, որոնք, հունալատինական տերմիններից զատ, հազեցած են նաև փոխաբերության հենքով ստեղծված մասնագիտական տերմիններով:

Ատենախոսության **ուսումնասիրության առարկան** փոխաբերությունն է որպես տերմինաստեղծ միջոց՝ ներքին հիվանդությունների գիտաճյուղերի և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների տեքստերում:

Ատենախոսության **նպատակն է** հիմնավորել փոխաբերության տերմինաստեղծ ներուժը՝ ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտներում:

Այս նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել լեզվաբանության մեջ փոխաբերության տեսական հայեցակերպի զարգացման հիմնական միտումները,
2. ներկայացնել փոխաբերության ճանաչողական հայեցակերպը,
3. հիմնավորել փոխաբերության տերմինաստեղծ ներուժը,
4. համակարգել ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների տերմինահամակարգում փոխաբերական միավորների անվանողական և լեզվաճանաչողական առանձնահատկությունները,
5. առանձնացնել փոխաբերական միավորների կազմավորման ոլորտները և հիմնական աղբյուր-տիրույթները,

6. վեր հանել փոխաբերական միավորների գործառույթները բժշկագիտական տերմինահամակարգում ընդհանրապես և բժշկագիտական տեքստերում մասնավորապես:

Սույն աշխատանքում առաջ է քաշվում այն **գաղափարը**, համաձայն որի ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների փոխաբերական միավորները դյուրըմբռնելի կերպով լեզվակա՛նացնում են խրթին մասնագիտական երևույթները, լեզվամտածողության և մասնագիտական գործունեության անբաժանելի մասն են կազմում և նպաստում են մասնագիտական տեսությունների ձևավորմանը:

Որպես **հետազոտության փաստական նյութ** ծառայել են ներքին հիվանդությունների ոլորտում և գործնական բժշկագիտության մի շարք բնագավառներում լայնորեն գործածվող, թվով շուրջ 800 անգլալեզու փոխաբերական միավորներ, որոնք հիմնականում չունեն հունալատինահիմք համարժեքներ և ներկայացված չեն կամ հազվադեպ են հանդիպում հոմանիշային զույգերով: Միավորներն ընտրվել են բժշկագիտական և կլինիկական գործունեության համար նախատեսված «Gray's Anatomy: The Anatomical Basis of Clinical Practice», «Harrison's Principles of Internal Medicine» մասնագիտական աշխատություններից, Stedmans Online Medical Dictionary բժշկական շտեմարանից, տերմինաբանական բացատրական բառարաններից, հանրագիտարաններից, բնագավառին հատուկ գիտակիրառական ամսագրերից և գիտատեղեկատվական հանդեսներից, տպագիր և առցանց հոդվածանյութերից և կլինիկական դեպքերի նկարագրություններից, ինչպես նաև բժշկական և կլինիկական ուղեցույցներից, որոնք տպագրել են բժշկագիտական, կլինիկական, հետազոտական հեղինակավոր միավորումներ և ընկերություններ Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայում:

Որպես ուսումնասիրության **մեթոդաբանական հենք** ընդունել ենք Ջորջ Լակոֆի, Մարկ Ջոնսոնի, Մաքս Բլեքի, Իվոր Ռիչարդսի, Էվա Քիթեյի, Էյլին Ուեյի, Ռայմոնդ Գիբբսի, Ռիչարդ Ռորթիի, Դոնալդ Շյոնի, Էդրիեն Սնոդգրասսի, Ռիչարդ Կոյնի, Լյուդվիգ Ֆլեքի, Էնդրյու Օրթոնիի, Ռիչարդ Բոյդի, Ջերալդին Վան Ռիյն-վան Տոնժերենի, Ջեյմս Չայլորեսի, Անատոլ Բրոյարդի, Ուորեն Շիբլզի, Բարբարա Մեյերի, Ալան Բլիքլեյի տեսական պնդումները, ճանաչողական լեզվաբանության, տեսական բժշկագիտության և բժշկահրավական էթիկայի ոլորտներում արված առանցքային դիտարկումները փոխաբերության և փոխաբերական միավորների լեզվաճանաչողական արժեքի վերաբերյալ:

Լեզվաբանական վերլուծության **մեթոդների** ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից: Աշխատանքում օգտագործվել է փոխաբերության բաղադրիչային վերլուծության և նկարագրական վեր-

լուծության մեթոդների համակարգը, այն է՝ բժշկագիտության, մասնավորապես՝ ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտներում փոխաբերացման արդյունքում ստեղծված միավորների կազմում ներառված բաղադրիչների իմաստային առանձնահատկությունների քննությունը և նկարագրական վերլուծությունը:

Ատենախոսության **գիտական նորույթը** պայմանավորված է այն փաստով, որ առաջին անգամ փորձ է արվում վեր հանել փոխաբերության տերմինաստեղծ հայեցակերպը, որի շրջանակներում հնարավորություն է ստեղծվում լրամշակելու և ուսումնասիրելու ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների տերմինահամակարգը՝ առավել մատչելի դարձնելով բժշկագիտական բարդ իրողությունների և կլինիկաախտաբանական բազմաշերտ երևույթների ընկալումները:

Աշխատանքի **տեսական նշանակությունն** այն է, որ հետազոտության արդյունքները կարող են նպաստել փոխաբերության հենքով ստեղծված անգլալեզու բժշկագիտական տերմինների ճշգրիտ մեկնությանը և դասակարգմանը բժշկագիտական տերմինահամակարգում: Ատենախոսությունն իր նպաստն է բերում նաև թարգմանաբանության և փոխաբերության տեսության զարգացման ոլորտներում, մասնավորապես՝ փոխաբերությունը գիտության հարթակում որպես գործածելի արտահայտչամիջոց կամ տերմին դիտարկելու տեսանկյունից:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** որոշարկվում է այն փաստով, որ մշակված նյութը կարելի է ընդգրկել անգլերենի բառագիտության բուհական դասընթացում՝ որպես փոխաբերության և փոխաբերական լեզվամտածողության ուսումնասիրությանը նվիրված ուսուցողական լրացուցիչ նյութ, մասնագիտական կողմնորոշման դասընթացներում, բառարանագրության, բժշկագիտական տերմինային լեզվանյութի դասավանդման մեթոդաբանության, ինչպես նաև թարգմանաբանության նեղ մասնագիտական ոլորտներում: Աշխատանքի արդյունքների հիման վրա որոշակի հնարավորություն է ստեղծվում հետագայում մշակելու և հրապարակելու բժշկական և հարբժշկական անձնակազմի, ինչպես նաև թարգմանիչների և տեսաբանների ուշադրությանն ուղղված և դեռևս գոյություն չունեցող բժշկագիտական տերմինային երկլեզու՝ անգլերեն-հայերեն բացատրական բառարան, որում մանրամասն անդրադարձ կարվի բացառապես փոխաբերական միավորներով առկայացված կլինիկաախտաբանական երևույթների անվանումներին:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը պայմանավորված են աշխատանքի թեմայով և դրանում առաջադրված նպատակով ու խնդիրներով: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից (եր-

կու գլուխներն էլ կազմված են ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների, շտեմարանների և համացանցային հղումների ցանկից և հավելվածներից: Գլուխներից և ենթագլուխներից յուրաքանչյուրն ավարտվում է ամփոփումով: Որոշ դեպքերում՝ ծանոթագրությունների միջոցով մասնավորեցվում են աշխատանքում տեղ գտած մտքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ:

Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը, մեթոդաբանական հիմքը և հետազոտության նյութը:

Աշխատանքի **առաջին գլխում** («**Փոխաբերության տեսական հայեցակերպը ճանաչողական լեզվաբանության համատեքստում**»), որը բաղկացած է չորս ենթագլխից, համակողմանի ուսումնասիրության են ենթարկվում լեզվաբանության մեջ փոխաբերության տեսական հայեցակերպի զարգացման հիմնական միտումները: Առաջին ենթագլխում («**Փոխաբերությունը՝ ճարտասանական միջոցից մինչև ճանաչողության գործիք**») քննության են առնվում փոխաբերության՝ արիստոտելյան ժամանակաշրջանում առկա և ճանաչողական լեզվաբանության մեջ առաջ քաշված տեսակետներն ու պնդումները:

Երկրորդ՝ «**Փոխաբերության տերմինաստեղծ հնարավորությունները**» ենթագլխում մանրամասն անդրադարձ է արվում տերմինի գնահատման տեսանկյունից կարևորվող մի շարք չափանիշների, ինչպիսիք են՝ **տերմինային մենիմաստությունը, իմաստաբովանդակային ճշգրտությունը, ռճական պլանի չեզոքությունը, սեղմությունը, գիտակցված պատճառաբանվածությունը**: Զուգընթաց քննարկվում է, թե ինչպես է փոխաբերացման արդյունքում կազմավորված նոր միավորը բավարարում տերմինին առաջադրվող նշված չափանիշները և, ըստ այդմ, իր ուրույն տեղը զբաղեցնում ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների տերմինահամակարգերում:

Երրորդ՝ «**Փոխաբերության գործառույթները բժշկագիտական տերմինահամակարգում**» ենթագլխում վեր են հանվում փոխաբերական միավորների գործառույթները բժշկագիտական տերմինահամակարգում և բժշկագիտական տեքստերում: Մանրակրկիտ քննության են ենթարկվում բժշկագիտության բնագավառում փոխաբերությամբ իրացվող հիմնական գործառույթները՝ տեսություն ձևավորող, կատախրեզային և դիդակտիկ:

Չորրորդ ենթագլխում («**Փոխաբերական լեզվամտածողության դրսևորումները բժշկագիտության բնագավառում**») անդրադարձ է կատարվում փոխաբերական լեզվամտածողության արդյունքում ձևավորված տերմին-

նային միավորներին և բառահոդվածներին: Փոխաբերական միավորն, այս պարագայում, գրավոր խոսքի հոսընթացում հանդես է գալիս որպես **հուզական էներգիայի և գիտական տեղեկատվության համաձուլվածք** և վերարտադրում է հասկացության կարևորագույն իմաստային հատկորոշիչները՝ նպաստելով նյութի արագ և մատչելի ընկալմանը: Արձանագրվում է նաև, որ **հուզարտահայտչական նշույթի շնորհիվ փոխաբերական միավորը թույլ է տալիս խուսափել բժշկագիտական շարադրանքի միապաղաղությունից**՝ նպաստելով գիտական մտածողության աշխուժացմանը, ինչն անհրաժեշտ է հաղորդված տեղեկություններն արդյունավետ ներըմբռնելու համար:

Ատենախոսության երկրորդ գլխում («**Փոխաբերականացումը որպես տերմինաստեղծ միջոց ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության այլ ոլորտների տերմինահամակարգերում**») համակարգվում են ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտների տերմինահամակարգերում փոխաբերական միավորների անվանողական և լեզվածանաչողական առանձնահատկությունները: Մանրագին քննության են ենթարկվում փոխաբերական այն միավորները, որոնք լայն կիրառություն ունեն ներքին հիվանդությունների բնագավառի տարբեր գիտաճյուղերում և միտված են առկայացնելու հիվանդությունը, կլինիկական երևույթը, խանգարումը, ձևախախտումը, ախտանշանը, նախանշանները, ախտահարումը, կլինիկական նշանները, համախտանիշը:

Երկրորդ գլուխը կազմված է երկու ենթագլխից, որոնցից յուրաքանչյուրում առանձնացվում են փոխաբերական միավորների կազմավորման ոլորտները և հիմնական աղբյուր-տիրույթները: Առաջին ենթագլխում («**Մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներից սերող աղբյուր-տիրույթները**») փորձ է արվում ընդլայնելու «մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներ» արտահայտության իմաստային միջուկը՝ *մատնանշելով այն աղբյուր-տիրույթները, որոնց շրջանակում տեսանելի և շոշափելի են անձի անատոմիական ներուժով պայմանավորված կենսագործունեության կամ կենսակերպի արդյունքները*: Հենց այս ակունքներից սկզբնավորվող միավորներն էլ ծառայում են կլինիկական տարբեր իրողություններ, հիվանդություններ, բժշկագիտական առանձնահատկություններ և երևույթներ լեզվակառուցելուն, ինչպես օրինակ՝ «**honeymoon period**» (մեղրամսի շրջան), «**kissing spines**» (համբուրվող ողեր), «**chandelier sign**» (ջահի նշան), «**clay shoveler's fracture**» (կավահատի կոտրվածք), «**bone remodeling**» (ոսկրային հյուսվածքի վերամոդելավորում), «**smart tumor**» (խելացի ուռուցք), «**tower skull**» (աշտարակային գանգ) և այլ միավորներ:

Առանձին անդրադարձ է կատարվում մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների աղբյուր-տիրույթների բառապաշարային միավոր-

ներով որոշարկված փոխաբերական միավորներին: Բառային միավորների՝ դեպի թիրախ-տիրույթ տեղաշարժերի որոշակի օրինաչափության հիման վրա առանձնացվում են մի շարք ենթախմբեր՝ *անձին բնորոշ հոգեհուզական և սոցիալական կարգավիճակներ, կենցաղային առարկաներ, մասնագիտության անվանումներ, առասպելական կերպարների անուններ, ճարտարապետությանը և մեքենաշինությանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին հատուկ կառուցվածքային, մարտական կամ այլ բնույթի միավորների անվանումներ, պատերազմ և ռազմական իրավիճակ մատնանշող լեզվական միավորներ*: Այստեղ առաջ է քաշվում այն դրույթը, որ **նշված ենթախմբերի փոխաբերական միավորների հասկացական հիմքում մարդն է և մարդու կենսագործունեությունը, նպատակը՝ կլինիկական ախտանշանի, խանգարման, ձևախախտման կամ հիվանդության նույնացումը մարդու նպատակաուղղված գործունեության արդյունքներին արտաքին կամ ներքին հատկանիշների նմանության հիմքով:**

Մարդու մոտ դիտվող ֆիզիկական խանգարումների, անատոմիական թերությունների, հոգեհուզական բացասական վիճակների և սոցիալապես պայմանավորված կարգավիճակների անվանումները նպաստել են ստվար զանգվածով փոխաբերական միավորների ձևավորմանը, որոնք բարեհաջող կերպով ներառվում են մասնագիտական բառապաշարի լեզվանյութում: Դիցուք, շաքարախտ հիվանդության մասին անզլալեզու նյութերում կարելի է հանդիպել **«honeymoon period»** (բառացի՝ մեղրամսի շրջան) փոխաբերական միավորը, որը մատնանշում է հիվանդության կլինիկական փուլերից մեկը, ինչպես հետևյալ օրինակներում՝

*«The **honeymoon period** (i.e., partial remission) of type 1 diabetes mellitus is characterized by reduced insulin requirements while good glycemic control is maintained.»¹,*

*«The **Honeymoon Phase** (or **Honeymoon Period**) amongst people with type 1 diabetes refers to the period of time shortly following diabetes diagnosis when the pancreas is still able to produce a significant enough amount of insulin to reduce insulin needs and aid blood glucose control.»²:*

Մասնավորապես, առաջին տիպի շաքարախտի դեպքում գոյություն ունի որոշակի փուլ, որի ընթացքում օրգանիզմում արտադրվող ինսուլինի չափաբաժինը բավարարում է հիվանդի ինքազգացողությունը բարելավելու

¹ Abdul-Rasoul M., Habib H., Al-Khouly M. “The honeymoon phase” in children with type 1 diabetes mellitus: Frequency, duration, and influential factors // Pediatric diabetes, 7(2), 2006.

² Diabetes.co.uk, Honeymoon Phase, <https://www.diabetes.co.uk/blood-glucose/honeymoon-phase.html>, հղումը՝ ըստ 29.03.2015թ.:

համար: Կլինիկորեն այս փուլը նկարագրվում է որպես «մեղրամսի շրջան», որն ամենայն հավանականությամբ, կապվում է իմունային համակարգի բարելավված գործունեության հետ: Տվյալ դեպքում զուգորդումներ են տարվում հիվանդի ինքազգացողության և նորապսակների համատեղ կյանքի ենթադրաբար՝ հոգեհուզական առավելագույնս երջանիկ փուլի միջև:

Անձի մասնագիտությունը, զբաղմունքը և կենսակերպը նույնպես ծառայում են որպես աղբյուր-տիրույթ՝ փոխաբերական միավորների ձևավորման համար և, այդ պարագայում, որևէ երևույթի անատոմիական կամ ախտաբանական հատկանիշները նկարագրելիս, համեմատվում են որոշակի մասնագիտությանը բնորոշ առանձնահատկությունների կամ մասնագիտական գործառույթների հետ՝ հիմնվելով երկու տարբեր հասկացությունների արտաքին կամ ներքին հատկանիշների մասնավոր համանմանության վրա: Շատ հաճախ մասնագիտական որևէ գործունեությանը հատուկ նշանները, որոնք ո՛չ հիվանդություն են, և ո՛չ էլ կլինիկական ախտանշան, կարող են դրսևորվել հիվանդության կամ օրգանիզմում համակարգային որևէ խնդրի տեսքով այն անձանց մոտ, ովքեր չեն հարում տվյալ մասնագիտությանը: Այդ նշանները կարող են ի հայտ գալ որոշ քիմիական և կենսաբանական գործոնների ազդեցությամբ, կարող են դրսևորվել որոշ ֆիզիկական գործողություններ կատարելու արդյունքում, որոնք հանգեցնում են մաշկային հիվանդությունների և ոսկրամկանային համակարգի խնդիրների: Այս պարագայում զուգահեռներ են տարվում որևէ մասնագիտությանը բնորոշ առանձնահատկությունների և հիվանդության կլինիկական նշանների միջև:

Օրինակ, «**clay shoveler's fracture**» (կավահատի կոտրվածք) տերմինաբանական կապակցությունը միտված է նշելու մարմնի վերին վերջույթների կոտրվածքներից մեկը: Ըստ բժշկագիտական որոշ տվյալների՝ 1930-ականներին Ավստրալիայում (համաձայն որոշ պատմական և ստուգաբանական աղբյուրների՝ սկզբնական շրջանում հանդիպել է հիմնականում այս երկրում) կավային փոս փորող վարձու աշխատողները հավաքած կավը նետում էին տասը, տասներկու կամ տասնհինգ ոտնաչափ բարձրության վրայով և այդ նպատակով որպես աշխատանքային գործիք բաի էին օգտագործում: Կավը բաիից անջատվելու փոխարեն երբեմն մնում էր բաիի վրա՝ ավելի ծանրացնելով բաիի ընդհանուր զանգվածը, որի հետևանքով այդ աշխատանքը կատարող մարդու պարանոցի և թիկունքի մկանների կորացման հաշվին թիակների արանքում կոտրվածք էր առաջանում³: Այսօրինակ կոտր-

³ McKellar Hall R.D. *Clay-Shoveler's Fracture* // Archive, 22(1), 1940. Available online at: <https://journals.lww.com/jbjsjournal/Citation/1940/22010/CLAY_SHOVELER_S_FRACTUR_E_.7.aspx>

վաճճները ներկայումս դասվում են որոշակի աշխատանքի կամ սպորտի հետևանքով առաջացող վնասվածքների խմբին, օրինակ՝

«A **clay-shoveler's fracture** is a very rarely occurring stress-type avulsion fracture of the lower cervical or upper thoracic spinous processes owing its name to the clay shovelers of past times. Currently, this type of injury is mainly encountered in individuals practicing sports involving rotational movements of the upper spine.»⁴,

«We report a case of a **clay shoveler's fracture** consequent to a motorcycle accident with serial radiographs showing healing of the fracture.»⁵:

Արտաքին կամ ներքին մի շարք գործոններով պայմանավորված՝ տարբեր օրգանների կամ փափուկ հյուսվածքների բնականոն գուներանգը նույնպես կարող է փոփոխվել: Ըստ որոշ աղբյուրների՝ գերչափաբաժնով սև թեյ կամ սուրճ օգտագործելը, ծխախոտի մեջ պարունակվող նիկոտինը, բերանի խոռոչի հիպիենայի կանոնները չպահպանելը, ի թիվս այլ գործոնների, կարող են նպաստել լեզվի հյուսվածքի գունային երանգի փոփոխության: Այս խնդիրը հայտնի է «**black hairy tongue**» (մազածածկ սև լեզու) անվանումով, որի կլինիկական նշանները նկարագրված են հետևյալ օրինակում.

«**Black hairy tongue (BHT)** is a benign medical condition characterized by elongated filiform lingual papillae with typical carpet-like appearance of the dorsum of the tongue. Its prevalence varies geographically, typically ranging from 0.6% to 11.3%. Known predisposing factors include smoking, excessive coffee/black tea consumption, poor oral hygiene, trigeminal neuralgia, general debilitation, xerostomia, and medication use.» (Gurvits 2014)⁶:

Բժշկագիտության մեջ հիվանդություն կամ ախտաբանություն մատնանշող փոխաբերական միավորները որոշարկվում են նաև առասպելաբանական կերպարների անուններով, ինչպես օրինակ՝ «**Medusa's head**» (Մեդուզայի գլուխ) փոխաբերական միավորը կամ, ինչպես նշվում է նաև լատիներենով, «**Caput medusae**»-ն՝ (որտեղ «Caput», ըստ լատիներենի ստուգաբանական բառարանի տվյալների, նշանակում է «գլուխ»⁷): Սակայն սա չի նշանակում, թե հին հունական դիցաբանական կերպար Մեդուզայի

⁴ Posthuma de Boer J., van Wulfften Palthe A.F., Stadhouder A., Bloemers F.W. *The Clay Shoveler's Fracture: A Case Report and Review of the Literature* // Journal of Emergency Medicine, 51(3), 2016.

⁵ Feldman V.B., Astri F. *An atypical clay shoveler's fracture: a case report* // The Journal of the Canadian Chiropractic Association, 45(4), 2001.

⁶ Gurvits G.E., Tan A. *Black hairy tongue syndrome* // World Journal of Gastroenterology: 20(31), 2014. Available online at: <<http://doi.org/10.3748/wjg.v20.i31.10845>>

⁷ Valpy F.E.J. *An etymological dictionary of the Latin language*, London: Printed by A.J. Valpy 1828, p. 6.

գլուխը եղել է ախտահարված որևէ հիվանդությամբ, կամ, թե Մեդուզան ինքը տատապել է որևէ հիվանդությամբ: Փոխաբերական այս միավորը լայն գործածություն ունի հիպերտենզիայի և յարդի թորչումումի հետևանքով մարմնի որովայնային պատին՝ ենթամաշկային հատվածում գալարուն, խոպոպներ հիշեցնող և ճյուղավորված արյունատար անոթները նկարագրելիս, ինչպես օրինակ՝

*«Other signs of advanced liver disease include umbilical hernia from ascites, hydrothorax, prominent veins over the abdomen, and **caput medusa**, a condition that consists of collateral veins radiating from the umbilicus and results from recanalization of the umbilical vein.»*⁸,

*«**Caput medusae** and palmar erythema are cardinal signs in cirrhosis of liver with portal hypertension»*⁹:

Համաձայն դիցաբանական աղբյուրների՝ Մեդուզայի կերպարային ընկալումը որոշակիորեն զուգորդվում է նրա վարսերի հետ, որոնց փոխարեն գալարվող օձեր են եղել¹⁰ և, մասնավորապես, այս համանմանությամբ նշված հիվանդությունն անվանվում է «Caput medusae» կամ «Medusa's head» փոխաբերությամբ: Ըստ այդմ, փոխաբերականացման շնորհիվ առկայացվել է այս ախտահարման անվանումը՝ տվյալ դեպքում հասկացական և պատկերային զուգորդումների բացահայտման միջոցով:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (**«Բնաստեղծ դաշտից¹¹ սերող աղբյուր-տիրույթները»**) մանրամասն անդրադարձ է կատարվում այն սկզբնաղբյուրներին, որոնց բառամիավորների ձուլմամբ կազմված փոխաբերական միավորները մատնանշում են ներքին հիվանդություններին և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտներին հատուկ կլինիկաախտաբանական երևույթներ և ախտաֆիզիոլոգիական գործընթացներ: **«Բնաստեղծ դաշտ»** արտահայտության բաղադրիչների իմաստային ծավալում ամփոփվում են **բնության կենսաշարժով սրեղծված և դրանով պայմանավորված տարրերից մի քանիսը, այն է՝ բուսականությունը, կենդանական աշխարհը, երկրամակերևույթի բաղադրիչները**: Այս համակարգերը կենդանի արտացոլանքն են

⁸ Kasper D.L., Fauci A.S., Hauser S.L., Longo D.L., Jameson J.L., Loscalzo J. Harrison's Principles of Internal Medicine, 19th edition. New York: McGraw Hill Education, 2015.

⁹ Hari Kumar K.V., Rastogi S.K. Caput medusae in alcoholic liver disease, 2011. Available online at: <<http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/22248963>>

¹⁰ Encyclopædia Britannica, <<https://www.britannica.com/topic/Gorgon>>, հղումը՝ ըստ 10.05.2015թ.:

¹¹ «Բնաստեղծ» միավորը բառարանագրվում է «բնակերտ, բնության ստեղծած, կերտած» նշանակությամբ (Սուքիասյան Ա.Մ. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009):

աշխարհի տարբեր կերպերի, իսկ լեզուն, լինելով աշխարհի հայելին, հասկացությանացում է այդ համակարգերի տարբեր հայեցակողմեր, որոնք, որպես արտալեզվական գործոններ, հսկայական դերակատարում ունեն անհատի գիտակցության և լեզվամտածողության ձևավորման գործում:

Այստեղ հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ, ի թիվս մարդու մտածական գործունեությամբ պայմանավորված գործոնների, փոխաբերականացումը տեղի է ունենում նաև մարդու և շրջակա միջավայրի փոխներգործության և փոխհարաբերակցության արդյունքում: Շրջակա միջավայրը սովյալ դեպքում բնության համակարգն է՝ տարբեր բաղադրիչներով (բուսականություն, կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, երկրամակերևույթի տարրեր և այլն): Այս ենթագլխում համակարգված օրինակները փաստում են, որ փոխաբերականացման արդյունքում միահյուսվում են անհատի լեզվամտածողության, գիտակցության, կենսափորձի բաղադրիչները և բնամիջավայրի տարրերի մասին ընկալումները: Այլ կերպ՝ հանդիպադրվում և հակադրամիասնություն են կազմում մարդկայինը և բուսականը, մարդկայինը և կենդանականը, մարդկայինը և երկրաբանականը: Օրինակ՝ «**coffee-with-milk spots**» (կաթնասուտքի բծեր), «**setting-sun phenomenon**» (մայրամուտի պատկեր), «**cloverleaf skull syndrome**» (երեքնուկի տերևի նմանվող գանգ), «**daisy flower pattern**» (աստղածաղիկի պատկեր), «**lilac ring pattern**» (եղևանու պատկեր), «**tiger heart**» (վագրի սիրտ), «**butterfly vertebra**» (թիթեռի ողնաշար) փոխաբերական միավորներով զուգահեռներ են տարվում մարդու օրգանիզմի և արտաքին աշխարհի միջավայրային բազմատեսակ տարրերի միջև:

Այս ենթագլխում իրականացված քննության հիման վրա առաջադրվում է այն դրույթը, որ **նշված ենթախմբերի փոխաբերական միավորների հասկացական հիմքում «բնություն-մարդ» փոխհարաբերակցությունն է, նպատակը՝ մարդու օրգանիզմի նույնացումը բնության տարակարգ բաղադրիչների հատկորոշիչներին՝ արտաքին կամ ներքին հատկանիշների նմանության հիմքով:**

Վերաբացարկման մակարդակում առկա երևույթները լեզվականացնելու գործում օգնության է գալիս լեզվագիտակցությունը, որը միահյուսում է բնության և երկնային համակարգի բաղադրիչները՝ գիտության անձանոթ բևեռների ու հայեցակետերի հետ՝ վերահիմաստավորելով առօրյայում կիրառվող լեզվամիավորները: Օրինակ՝ ակնաբուժության ոլորտում «**setting-sun phenomenon**» կամ «**sunset eye sign**» (մայրամուտի պատկեր կամ մայրամուտի նշան) փոխաբերական միավորն օգտագործվում է՝ նկարագրելու ներգանգային գերճնշման հետևանքով առաջացած լուրջ ակնային խանգարումը, որի ժամանակ դիտվում է վերին կոպի իջվածք կամ կոպանկ, իսկ

վերին կոպի և ծիածանաթաղանթի միջև նշմարվում է սպիտաթաղանթը: Կլինիկական այս նշանները նկարագրված են հետևյալ օրինակներում.

«*The **sunset eye sign** (also known as the **setting sun phenomenon**) is a clinical phenomenon encountered in infants and young children with raised intracranial pressures. It consists of an up-gaze paresis with the eyes appearing driven downward. The lower portion of the pupil may be covered by the lower eyelid, and sclera may be seen between the upper eyelid and the iris.*»¹²,

«*The **setting-sun phenomenon** is an ophthalmologic sign in young children resulting from upward-gaze paresis. In this condition, the eyes appear driven downward, the sclera may be seen between the upper eyelid and the iris, and part of the lower pupil may be covered by the lower eyelid.*»¹³:

Տվյալ դեպքում ախտաբանության կլինիկական դրսևորումը զուգորդվում է բնության երևույթներից՝ մայրամուտի արևի պատկերի հետ: Փոխաբերությունն, այս առումով, մեկնաբանում է բարդ բժշկագիտական տեղեկատվությունը՝ այդպիսով մատչելի դարձնելով դրա իմաստաբովանդակային պլանը և ապահովելով հաղորդագրության դյուրամբռնելիությունը հասցեատիրոջ համար՝ տնտեսելով կլինիկական գործունեության մեջ կարևորվող ժամանակը:

Բուսական աշխարհի հետ աղերսներ ունեցող փոխաբերությունները, որոնցում հիվանդությունը արտաքին կամ ներքին որոշ հատկանիշների հիմքով նույնական է բույսի կառուցվածքային առանձնահատկություններին, կարող են լրացված լինել բուսատեսակի որևէ մասի կամ ծառատեսակի անվանումով: Օրինակ, տարբեր ծառերի տերևների անուններով կարող են որոշարկվել վերմաշկային հատվածում դիտվող ախտանշանները, ինչպես օրինակ՝ «**ash leaf spots**» կամ «**ash-leaf macule**» (հացենու տերևի բծավորում): Սրանք տուբերոզ սկլերոզ հիվանդության ժամանակ՝ մաշկային արտաքին ծածկույթի վրա դիտվող հետքեր են, որոնք ունեն թույլ պիգմենտավորում, հացենու տերևի ձև և բծավորմամբ նմանվում են հացենու տերևի արտաքին նախշին, օրինակ՝

«*While earlier reports had described the existence of “vitiligo” and “depigmented nevi” in patients with TS, Fitzpatrick et al coined the characteristic name for the hypopigmented macules: **ash leaf macules.***»¹⁴,

¹² Radiopaedia.org, Sunset eye sign <<https://radiopaedia.org/articles/sunset-eye-sign>>, հղումը՝ ըստ 15.05.2012թ.:

¹³ Boragina M., Cohen E. An infant with the “setting-sun” eye phenomenon // CMAJ : Canadian Medical Association Journal, 175(8), 2006. Available online at: <<http://doi.org/10.1503/cmaj.060507>>

¹⁴ Arbiser J.L. Efficacy of Rapamycin in Tuberous Sclerosis-Associated Hypopigmented Macules: Back to the Future // JAMA Dermatology, 151(7), 2015.

«**Ash-leaf spots**, a diagnostic manifestation of tuberous sclerosis complex, are sometimes difficult to differentiate from other hypopigmented lesions.»¹⁵:

Մեկ այլ օրինակ է «**cloverleaf skull syndrome**» (բառացի՝ երեքնուկի տերևի նմանվող գանգ) տերմինաբանական կապակցությունը: Խոսքն այստեղ գանգի վաղաժամ ոսկրացման մասին է, ինչի արդյունքում գանգի կամարը նմանվում է երեքնուկի տերևի ուրվագծին: Այս խնդիրը հստակ տեսանելի է լինում ռենտգենանկարի վրա և առաջանում է ներարգանդային շրջանում պտղի գանգի միջոսկրային առաջահետային, պսակաձև և լյամբոպսակաձև կարանների վաղաժամ սերտաճման դեպքում: Արդյունքում, գանգը ձևախախտվում է՝ ընդունելով երեքնուկի տերևի եռմասնյա ձև, ինչը նկարագրված է հետևյալ օրինակում.

«**Cloverleaf skull syndrome** is an abnormal configuration of the calvaria classified as craniosynostosis, consisting of premature ossification of cranial sutures. It is a deformity characterized by a remarkable enlargement of the head, with a trilobed configuration of the frontal view, resembling a threeleaved clover»¹⁶,

«**Cloverleaf skull syndrome** is a rare presentation of craniosynostosis with clinical features consisting in trilobed skull, exophthalmos, low ear implantation and upper airway.»¹⁷:

Մանկաբուժության բնագավառում կարելի է, առանց որևէ սարքավորում կիրառելու, փստորոշել «**blueberry muffin baby**» կամ «**blueberry muffin rash**» անվանվող հիվանդությունը, որի ժամանակ մաշկային բազմաթիվ կապտավուն արյունազեղումների հետևանքով դիտվում է «հապալասե բուլկանման երեխա»-ի կամ «հապալասե բուլկանման ցանավորում» պատկերը: Օրինակ՝

«**Blueberry Muffin Baby** is a rare neonatal cutaneous syndrome for purpuric lesions reflective of extramedullary hematopoiesis.»¹⁸,

«**The blueberry muffin rash** as well as nodules, bruising, and crusts may all indicate serious underlying diseases and sometimes may represent the first clinical manifestation of rare neoplasms in the newborn infant.»¹⁹:

¹⁵ Jindal R., Jain A., Gupta A., Shirazi N. *Ash-leaf spots or naevus depigmentosus: a diagnostic challenge* // BMJ Case Reports, 2015. Available online at: <<http://doi.org/10.1136/bcr-2012-007008>>, հղումը՝ ըստ 20.05.2016թ.:

¹⁶ Fonseca J.M., Borem L.M. *Cloverleaf skull syndrome: case report* // Radiologia Brasileira, 47(3), 2014. Available online at: <<http://doi.org/10.1590/0100-3984.2013.1681>>, հղումը՝ ըստ 20.05.2017թ.:

¹⁷ Fonseca J.M., Borem L.M. *Cloverleaf skull syndrome: case report* // Radiologia Brasileira, 47(3), 2014. Available online at: <<http://doi.org/10.1590/0100-3984.2013.1681>>, հղումը՝ ըստ 20.05.2017թ.:

¹⁸ National Center for Biotechnology Information, <<https://www.ncbi.nlm.nih.gov/labs/articles/24507207/>>, հղումը՝ ըստ 20.05.2013թ.:

Մանկաբարձության բնագավառում լայն գործածություն ունեն նաև կենդանիների անուններով լրացված փոխաբերական միավորները, որոնցից է «**kangaroo care**» (հմաստային մեկնությամբ հնչում է որպես՝ «խնամել, ինչպես ագեվազն է խնամում») միավորը: Այս պարագայում զուգահեռներ են տարվում մարդու վարքային և կենդանու անատոմիական յուրահատկությունների միջև: Խոսքը նորածին կամ վաղածին երեխաների խնամքի մեթոդի մասին է, որի ժամանակ մայրը գրկում է նորածին՝ ծածկելով նրան իր հագուստով կամ որևէ ծածկոցով: Ըստ գիտական աղբյուրների^{20 21} պարտադիր է, որ երեխայի մաշկը հպվի մոր մաշկին, ինչը դրական դաշտ է ստեղծում երեխայի լիարժեք ֆիզիոլոգիական զարգացման և հոգեկան աշխարհի ձևավորման համար: Ասվածի ապացույց կարող են ծառայել հետևյալ օրինակները՝

«Kangaroo care (KC) is the practice of skin-to-skin contact between infant and parent. In developing countries, KC for low-birthweight infants has been shown to reduce mortality, severe illness, infection and length of hospital stay.»²²,

«Kangaroo Care positioning before and during heel stick is a simple and inexpensive analgesic intervention to ameliorate pain in stable premature infants.»²³:

Սեփական հագուստի կամ ծածկոցի մեջ երեխային գրկելը և պարուրելը հիշեցնում է ձագին պատսպարող ագեվազի պարկը: Պատկերային և հասկացական այս զուգորդումը նպաստել է «kangaroo care» փոխաբերության ձևավորմանը, որտեղ զուգադրվել են մարդու վարքային և կենդանու անատոմիական յուրահատկությունները:

Փոխաբերական միավորների՝ աղբյուր-տիրույթային հիմքով տոկոսային բաշխվածության տվյալներին ատենախոսության մեջ ներկայացվում են հետևյալ գծապատկերի տեսքով²⁴:

¹⁹ Mondì V., Piersigilli F., Salvatori G., Auriti C. *The Skin as an Early Expression of Malignancies in the Neonatal Age: A Review of the Literature and a Case Series* // BioMed Research International, 2015. Available online at: <<http://doi.org/10.1155/2015/809406>>


²⁰ Jefferies A.L. *Canadian Paediatric Society, Fetus and Newborn Committee, Kangaroo care for the preterm infant and family* // Paediatrics & Child Health, 17(3), 2012.

²¹ Ludington-Hoe S.M., Hosseini R.B. *Skin-to-Skin Contact Analgesia for Preterm Infant Heel Stick* // AACN Clinical Issues, 16(3), 2005.

²² Jefferies A.L. *Canadian Paediatric Society, Fetus and Newborn Committee, Kangaroo care for the preterm infant and family* // Paediatrics & Child Health, 17(3), 2012.

²³ Ludington-Hoe S.M., Hosseini R.B. *Skin-to-Skin Contact Analgesia for Preterm Infant Heel Stick* // AACN Clinical Issues, 16(3), 2005.

²⁴ Գծապատկերը՝ Ա.Լ. Պետրոսյանի:



Եզրակացության մեջ ներկայացվում են կատարված հետազոտությամբ ձեռք բերված հետևյալ արդյունքները:

- Բժշկագիտական տերմինաբանակարգը միատարր չէ. այն ընդգրկում է ոչ միայն հունալատինական լեզվափոխություններ և լեզվի ներքին բառակազմական եղանակներով ձևավորված տերմիններ, այլև փոխաբերության հենքով կազմավորված միավորներ, որոնց շնորհիվ բժշկության մեջ լեզվականացվում են կլինիկախտաբանական նոր երևույթներ և ախտաֆիզիոլոգիական գործընթացներ:
- Բժշկագիտական տեքստերում փոխաբերական միավորները չեն ստեղծվում տարբերայնորեն. դրանք արդյունք են գիտակցված և նպատակադիր մտածական գործունեության՝ թելադրված ժամանակի տնտեսման, իմաստային լիցքի խտացման և հիվանդության կամ ախտաբանության մասին տեղեկատվության դյուրըմբռնելիությունն ապահովելու գործունեություն:
- Բժշկագիտության ոլորտում փոխաբերական միավորը ճանաչողական արժեք ներկայացնող տեղեկատվական «ատոմ» է, որի իմաստային «էլեկտրոններում» կուտակված է անհատի գիտական փորձառությունն ու մասնագիտական գիտելիքը՝ միահյուսելով անհատի լեզվաճանաչո-

ղության և մշակութային աշխարհընկալման առանձնահատկությունները:

- Գործառույթային տեսանկյունից փոխաբերական միավորները բժշկագիտության ոլորտում միտված են գիտական տեսության ճնշմանը, բժշկագիտության ոլորտի տերմինահամակարգում տերմինային վակուումի լրացմանը, բժշկագիտական անձանոթ հասկացության առկայացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. Փոխաբերությունը որպես տերմինաստեղծման միջոց բժշկագիտության ոլորտում // «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում», Գիտական հոդվածների ժողովածու, 5-Եր., «Լուսակն», 2013, էջ 13-16:
2. Փոխաբերությունները և բժշկագիտական հասկացությունները // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(28), «Լինգվա», 2013, էջ 118-124:
3. A Metaphoric Nexus of Terms in Neuroanatomy // Armenian Folia Anglistika, N 1(13), Yerevan, Yerevan State University Press, 2015, pp. 50-57.
4. Ճանաչողական փոխաբերության գիտական հայեցակետերը բժշկագիտության ոլորտում // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(32), «Լինգվա», 2015, էջ 312-318 (համահեղինակ՝ Ս. Մարգարյան):
5. Մենդանուն բաղադրիչով բժշկագիտական փոխաբերությունը՝ որպես կլինիկալատաբանական եզրույթ // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(38), «Լինգվա», 2016, էջ 533-540:
6. Metaphor through the Lens of Clinical Medicine: The Case of Specialty-Specific Signs // Armenian Folia Anglistika, N 2(16), Yerevan, Yerevan State University Press, 2016, pp. 38-48 (համահեղինակ՝ Ս. Մարգարյան):
7. Բժշկագիտության ոլորտում առասպելաբանության հենքով կազմված որոշ փոխաբերությունների շուրջ // «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» (ISSN2579-2458), Գիտական հանդես, 8-Եր., «Լուսակն», 2017, էջ 18-25:

8. Փոխաբերության նշանակությունը բժշկության բնագավառում // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(44), «Լինգվա», 2018, էջ 435-443 (համահեղինակ՝ Ս. Մարգարյան):

АЛИНА ГЕНРИХОВНА ПЕТРОСЯН

МЕТАФОРА КАК СРЕДСТВО ФОРМИРОВАНИЯ ТЕРМИНОВ
В МЕДИЦИНСКИХ ТЕКСТАХ

РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена исследованию метафоры как средство формирования терминов в медицинских текстах внутренних болезней и ряда областей практической медицины.

Актуальность работы определяется тем, что недостаточно изучена метафора в парадигме особенностей формирования и функционирования медицинских англоязычных терминов, а также тем, что количество исследовательских работ посвященных изучению терминообразовательного аспекта метафоры и употреблению метафорических единиц в области медицины незначительное. Исходя из этих факторов, могут возникнуть сложности при переводе узкопрофессиональных медицинских текстов, в которых, помимо терминов греко-латинского происхождения, также употребляются профессиональные термины, созданные на основе метафоры.

Цель данной диссертации – определить роль и потенциал метафоры в формировании новых терминов в областях внутренних болезней и практической медицины.

Поставленная цель предполагает решение следующих **задач**:

1. изучение основных тенденции развития теоретической концепции метафоры в лингвистике;
2. описание когнитивной концепции метафоры;
3. обоснование терминообразовательного потенциала метафоры;
4. координирование лингвокогнитивных особенностей метафорических единиц в терминологии ряда областей внутренних болезней и практической медицины,
5. выявление областей и основных сфер-источников, которые служат основой для формирования метафорических единиц;
6. выявление основных функций метафорических единиц в медицинской терминологии и медицинских текстах.

Научная новизна работы заключается в том, что впервые предпринята попытка выявить терминообразовательный потенциал метафоры, который способствует изучению терминологии ряда областей внутренних болезней и практической медицины, тем самым сделав сложные меди-

цинские и клинические явления более доступными с точки зрения восприятия.

Теоретическая значимость диссертации заключается в том, что результаты исследования могут способствовать более точной интерпретации и классификации англоязычных медицинских терминов сформировавшихся на основе метафоры. Теоретическая значимость работы обусловлена также вкладом в теорию перевода и общую теорию развития метафоры.

Практическая значимость работы заключается в возможности применения её материала, как компонент посвященный изучению и рассмотрению особенностей метафоры, при чтении вузовских курсов по лексикологии английского языка, по лексикографии, а также в методике преподавания медицинской терминологии, в переводе узкоспециального текста и в курсах английского языка для специальных целей.

В **Заключении** представлены результаты проведенного исследования.

ALINA HENRIK PETROSYAN

METAPHOR AS A MEANS OF TERM FORMATION IN MEDICAL TEXTS

SUMMARY

This research evolves around the metaphor viewing it as a means of crafting medical terms in texts of internal medicine and a number of spheres of clinical medicine.

The **topicality** of the research is evidenced by the fact, that the phenomenon of metaphor has not been thoroughly examined within the paradigm of formation and functioning of medical terms. The scarcity of the research and scholarly works on metaphoric term formation and the usage of metaphoric units in medicine is one more evidence of the topicality of this research. Having regard to these facts, certain difficulties arise when it comes to construing or translating specific medical texts in narrow medical specializations, where the latter, in addition to terms of Latin and Greek etymology, also employ metaphoric terms.

Making reference to the said, the **goal** of this research is to substantiate and prove term-forming potential of metaphor within internal medicine and a number of spheres in clinical medicine.

This goal is achieved through the scrupulous analysis of the following **general objectives** of the research:

1. to examine the major development tendencies of the theoretical strands, which evolve around the metaphor in linguistics;
2. to elucidate the cognitive conception of metaphor;
3. to prove and substantiate the term-forming potential of metaphor;
4. to systematize the linguo-cognitive peculiarities of metaphoric units in the terminologies of internal medicine and a number of fields of clinical medicine;
5. to single out the major fields and source-domains, which serve focal reference points in crafting metaphoric units;
6. to reveal the functions of metaphoric units in medical terminology and medical texts.

The **novelty** of the research is largely conditioned by the fact, that a first-ever attempt is made to reveal the term-forming potential of metaphor in medicine, which will allow examining different aspects of the terminology of internal medicine and a number of fields of clinical medicine. This also allows translating the abstract and complex notion of a disease, medical condition or pathological phenomena into distinctive markers easy for understanding.

The **theoretical value** of the research is illustrated by the fact, that its outcomes may give opportunity to accurately construe and classify manifold medical terms created on metaphoric grounds. The research also adds value in the development of translation studies and theory of metaphor.

The **practical significance** of the research is evidenced through the applicability of its content in academic courses ranging from lexicology and teaching methodology to courses for specific purposes and translation studies.

The **conclusion** succinctly summarizes the main findings of the research.

